«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 105 -Լ

2022թ. ապրիլի «29» ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետը և «Հայաստանի ֆիզիական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Հանրային և ինստիտուցիոնալ կապերի բաժնի կանոնակարգը համաձայն կից հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՌԱՖԱԷԼ ԽԻԹԱՐՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի ապրիլի _29_ թիվ _ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) **Հանրային և ինստիտուցիոնալ կապերի** բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնակարգը սահմանում է Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
2. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»,«Զանգվածային լրատվության մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Ինստիտուտի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:
3. Բաժինը ունի ձևաթուղթ:
4. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն Ինստիտուտի կանոնադրության:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի նպատակն է աջակցել Ինստիտուտին իր առաքելությանը, դրան համապատասխան ռազմավարական նպատակների իրականացմանը և ռազմավարական խնդիրներին համապատասխան բուհի վարկանիշի ձևավորմանը և հեղինակության բարձրացմանը
6. ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր ՀՖԿՍՊԻ-ի արտաքին շահակիցների և հանրային կառույցների հետ
7. աջակցել Ինստիտուտի հասարակական պատասխանատվության բարձրացմանը, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը
8. իրականացնել ՀՖԿՍՊԻ-ի գործունեության մասին տեղեկատվական և քարոզչական ակտիվ քաղաքականություն
9. **Բաժնի խնդիրներն են**.

1) նպաստել ՀՖԿՍՊԻ՝ որպես ոլորտային բացառիկ բուհի, դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, բուհի առաքելության և գործունեության համար նպաստավոր հաղորդակցային միջավայրի ապահովմանը:
2) իրականացնել ՀՖԿՍՊԻ-ի առաքելությանը, գործունեության ուղղություններին և նպատակներին համահունչ քարոզչական աշխատանքներ
3) Ինստիտուտի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման միջոցով ամրապնդել բուհի առաջատար դիրքը գիտահետազոտական, կրթական և սպորտային ոլորտներում:

10. Բաժնի գործառույթներն են՝

1) միջբուհական կապերի ստեղծման աշխատանքները, գերատեսչական մարմինների հետ համագործակցային կապերի համակարգումը և զարգացումը
2) հայաստանյան կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի համակարգում
3) աշխատաշուկայի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն
4) Ինստիտուտի կայքի և սոցցանցերի նպատակային բովանդակության ստեղծում ու SMM կառավարում (թարմացում, տեքստային և պատկերային նյութերի պատրաստում, տեղադրում, հետկապի ապահովում),
5) համագործակից բուհերի հետ կապերի հաստատման գործընթացի ապահովում

6) աջակցություն հետազոտական և գիտական ծրագրերի զարգացման նպատակով ուսանողների և դասախոսների հետ հանդիպումների կազմակերպման աշխատանքներին
7) շարունակական և ոչ ֆորմալ կրթության կազմակերպչական աշխատանքների առաջխաղացում
8) համացանցում մեդիամարքեթինգային աշխատանքների համակարգում
9) Ինստիտուտի մասին ԶԼՄ հրապարակումների մշտադիտարկման վերլուծություն
10) տեղեկատվական նյութերի (հաղորդագրությունների) կազմման և դրանց հանրայնացման աշխատանքների կազմակերպում
11) հարցազրույցների և մամուլի ասուլիսների կազմակերպում
12) Ինստիտուտի կայքի և սոցցանցերի նպատակային բովանդակության ստեղծման և կառավարման աշխատանքների վերահսկողություն
13) Ինստիտուտի ռազմավարական նպատակներին և վարկանիշի բարձրացման ուղղություններին համահունչ Web բովանդակության ռազմավարության մշակման աշխատանքների կազմակերպում, համակարգում
14) սոցիալական մեդիայի ռազմավարության մշակման աշխատանքների համակարգում
15) Ինստիտուտի ներբուհական և արտագնա միջոցառումների լուսանկարահանումներ և տեսանկարահանումներ
16) Ինստիտուտի մարկետինգային հնարավորությունների ձևավորում (դիզայն)
17) Բաժնի գործունեությանը վերաբերելի ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերի կազմում և ներկայացում Իրավական ապահովման բաժնի կարծիքին:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
12. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով և աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:

13. Բաժնի ղեկավարումը իրականացնում է Բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի:
14. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:
15. Բաժնի աշխատանքները համակարգում է արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը, ում անմիջապես ենթակա և հաշվետու է Բաժնի ղեկավարը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

16. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:
17. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
18. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
19. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
20. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից:
22. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: